ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Տաճկաստանի Նոր Կայսեր Վեհափառ Սուլթան Մուրատ Խանի գահակալութեան առթիւ երեք օր ճրագավառութիւն եղաւ քաղաքիս մէջ։

— Հալէպի Ռուսաց Հիւպատոս Պ. Իւանով ընտանեօք հանդերձ յուխտ եկաւ 'ի Ս. Երուսաղէմ, շրջագայեց բոլոր Ս. Տեղիքն, ամեն ազգաց վանքերն ու հաստատութիւններն և վերադարձաւ իւր պաշտօնատեղին։

— Զատկէն երկու շաբաթ առաջ Ռուսաց վանուց կից գետնի վերայ վրաններ կային և կը լսուէր, թէ մի երեւելի Ռուս Ազնուականի կը պատկանին։ Այն Ազնուականն բռնած էր երեք սենեակ նաև Ռուսաց վանուց մէջ, բայց այն տեղ չէր բնակէր, այլ վրանաց տակ։ Շարունակ կը տեսակցէր Ռուսաց Հիւպատոսի հետ, վանահօր հետ, ներկայ կը գտնուէր Զատկական հանդէսներուն, ինչպէս որ ներկայ գտնուեցաւ Զատկի երկուշաբթի օրն մեր մեծաշուք հանդիսին 'ի Տաճարի Ս. Յակոբեանց։

Քանիցս ներկայ գտնուելով յունական ժամերգութեան Ս. Յարութեան տաճարի մէջ՝ հաղորդուեցաւ Ս. Գերեզմանի վերայ եւ ամեն Ս. Տեղիքն շրջագայելով վերադարձաւ։

Այժմ կը լսուի, թէ յիշեալ Ազնուականն եղած է Ռուսաց Կայսերորդի Ալէքսէյ Ալէքսանդրովիչն, որ Աթէնքէն ելնելով յԵգիպտոս երթալու նպատակաւ, ծպտեալ կերպիւ եկած է 'ի Պաղեստին և քանի մի ժամանակէն զինի վերադարձած է առանց երբէք զինքն ճանաչեցնելու։ Կը պատմեն թէ ծովապետութեան պաշտօնի մէջ կը գտնուի յիշեալ Կայսերորդին։

— Տեղւոյս Գերմանական Հիւպատոսարանի թարգման մեր Հայազգի լեզուագէտ երիտասարդն Պ. Սրապիոն Մուրատեան, որ գրեթէ մի տարիէն 'ի վեր ճանապարհորդութեան մէջ կը գտնուէր, և գրեթէ բոլոր Եւրոպա շրջագայած է ամենայն հետաքրքրութեամբ և քանիցս 'ի Բերլին Գերմանիոյ Կայսեր և Թագաժառանգ Իշխանի տեսութիւնն վայելած, վերադարձաւ 'ի քաղաքս և սկսաւ շարունակել իւր պաշտօնն։

— Մեծ. Պ. Յարութիւն Թ. Գալըպագճեան Հայազգի երիտասարդն, որ Աւստրիոյ Հիւպատոսարանի մէջ Թղթատարութեան Տեսչի պաշտօն կը վարէր, այժմ հաստատուեցաւ նաեւ Թարգմանութեան պաշտօնի մէջ։

Հայ երիտասարդաց յառաջադիմութիւնն անշուշտ մեծ ուրախութիւն է ամեն Հայասիրաց համար։

— Ամսոյս 21էն մինչ քաղաքիս Կառավարիչն 'ի Գազա կը գտնուէր քանի մի պաշտօնակալներով հանդերձ եւ Հաշուեկալն 'ի Պէրութ, բաւական մեծ յուզումն եղաւ քաղաքիս մէջ։ Առաւօտեան ժամանակ յանկարծ լուր տարածուեցաւ, որ Տաճիկք յետ կէսաւուր աղօթից պիտի յարձակին Քրիստոնէից վերայ և կոտորեն։ Քաղաքի խանութներն փակուեցան, խառնաշփոթ աղաղակներ տարածուեցան ամեն ուրեք, Տաճիկք կը փախչէին Քրիստոնեաներէն, կարծելով թէ Քրիստոնեայք ապստամբած են. Քրիստոնեայք կը փախչէին Տաճիկներէն՝ կարծելով՝ թէ պիտի կոտորուին։ Լատին ժողովուրդն խռնեցաւ Լատինաց վանուց մէջ. Հայք խռնեցան Հայոց վանուց մէջ. իսկ Յունաց վանքն ժողովուրդն չընդունեց։

Յուզումն գրեթէ ընդհանուր էր քաղաքի բոլոր բնակչաց մէջ, բայց թէ

digitised by A.R.A.R.@

ուստի՞ արծարծուած էր եւ ինչպէս հանրացած, ամենքն անգէտ էին այս մասին։ Ոմանք կ'ասէին Լատինաց վանքէն ծագած է, ոմանք կ'ասէին՝ իբր թէ մի Տաճիկ Շեխէն լսուած է եւ այլն եւ այլն։ Նոյն իսկ Կառավարութիւնն բոլորովին անգիտակ էր, ուստի եւ Կառավարչի Տեղապահն սկսաւ շուտով վանքերն վազել եւ խնդրել որ անդորրութեան յորդոր կարգան ժողովրդեան, յայտնելով՝ որ տարապարտ տարածուած լուր է եւ բնաւ երկիւղի տեղիք չը կայ։ Շուտով սկսաւ զօրք կանգնեցնել թէ Վանքերու առջեւ, եւ թէ գլխաւոր ճանապարհներու եւ շուկաներու մէջ եւ տպահովութեան յորդոր կարդալ տալ, որ ամենիքեան իրենց անելիքն դառնան, խանութներն բանան եւ իրենց գործով պարապին։ Ժողովուրդներն վանքերէն իրենց տեղերն դարձան, բայց երեկոյեան մօտ լինելով՝ շատ խանութներ չը բացուեցան։

Երկրորդ օրն Կառավարիչն Գաղայէն քաղաքս ժամանեց եւ յատկապէս պաշտօնական գրեր գրեց ամեն Վանքերուն եւ Հիւպատոսարաններուն, որ տպահով լինին, յայտնելով թէ բոլորովին անստոյգ տարաձայնութենէ յառաջ եկած է յուզումն եւ ինքն կը հետախուզէ շարժառիթն գտնել. բայց վարկպարագի խօսքերէ զատ ուրիշ բան չը կայ։ Բաց յայտնէ, յատուկ ժողով կազմեց Սարայի մէջ եւ իւրաքանչիւր ազգէ երեքական անձինք ժողովելով նոցա եւս յայտնեց, որ անդորրութեան յորդոր կարդան իրենց ժողովրդին։ Այս ամեն զգուշութիւններէն զատ՝ պահակներն եւս տիւ եւ գիշեր կը շրջին քաղաքի մէջ բնակչաց տպահովութեան համար։

Մոռացանք ասել, որ Երուսաղեմի յուզման լուրն նոյն օրն շրջակայ գիւղերէն մէջ եւս տարածուելով՝ բաւական երկիւղ պատճառած է բնակչաց։ Սակայն այժմ գիւղերն եւս անդորրութեան մէջ են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՑ

Վ. Ա. ՀՐԱՄԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԲԱՆ

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՅՕՏՈՒՄՆ

ԼԵՒՈՆԻ Գ. ԱՐԲԱՑԻ ՀԱՅՈՑ

Գին 2 դահեկան։

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ

ԾՈՅԱԿԻՐ

Գին 8 դահեկան։



digitised by A.R.A.R.@